ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

25.03.2021Թ. ԿՆՔՎԱԾ N «ԳՀԱՊՁԲ-2021/12-1-ԵՊԲՀ-3» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան « » « » 2021թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամը ի դեմս ռեկտոր Արմեն Աբգարի Մուրադյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ջի-Էս-Սի» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Հ.Ավետիսյանի, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 25.03.2021թ. կնքված N «ԳՀԱՊՁԲ-2021/12-1-ԵՊԲՀ-3» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.6-րդ կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը, «Ջի-Էս-Սի» ՍՊ ընկերության 28.04.2021թ.-ին ներկայացված դիմումը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին N «ԳՀԱՊՁԲ-2021/12-1-ԵՊԲՀ-3» գնման պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով՝ մինչև սույն թվականի հունիսի 1-ը ներառյալ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է N «ԳՀԱՊՁԲ-2021/12-1-ԵՊԲՀ-3» գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը, մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված են 1 (մեկ) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ	«Ջի-Էս-Սի» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2	Հասցե՝ ք.Երևան, Աճեմյան 18, շին.44
Հեռախոսահամար՝ 060 621 000	Հեռախոսահամար՝ 055 990 991
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 11500166513800	Հ/հ՝ 2051022013031001
ՀՎՀՀ՝ 01503448	ՀՎՀՀ՝ 02258906
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան	էլ. հասցեն՝ hikvision.gsc@gmail.com
	Տնօրեն՝ Հ.Ավետիսյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.05.03 13:01:48 AMST

Digitally signed by AVETISYAN HAYK 1101810351
Date: 2021.04.30 11:02:25 AMT